Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 09-07-2024 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ Դավիթ Անհաղթի 10 1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00223
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-11-13
1.5 ՀՎՀՀ-ն		01002296
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60279642
		+(374)93499588
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.ufar.am
1.8 Էլեկտրոնային փոստը		Aghasi.Sahakyan@pers.ufar.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Ֆրանսիայի և Հայաստանի կառավարություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Սալվա Նակուզի		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	326	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	ՀՀ կառավարության կողմից ստացված կրթաթոշակներ և նպաստներ	85,214,500
	Արցախի Կառավարության կողմից Արցախի ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	2,444,100
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by
SAHAKYAN AGHASI
2707970395
Date: 2024.06.28
12:11:22 AMT

	Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության կողմից կրթական նպատակով օժանդակություններ	46,583,000
	UGAB համալսարանի կողմից տրված գեոյերի փոխհատուցում	41,737,000
	Միջազգային գրանտային ծրագիր	150,295,400
	Բանկերի կողմից ստացված տոկոսային եկամուտներ	12,309,000
	Վարձակալությունից ստացված դրամական միջոցներ	1,295,714
	Կրթական նպատակով ստացված նվիրատվություններ	36,650,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ուսանողների ուսման վճարներ	1,532,091,294
	Կիբեռանվտանգության դասընթացի վարձավճարներ	1,600,000
	Ընդունելության քննության վճարներ	11,085,000
	Նվիրատվություններ	5,000,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Բարձրագույն և հետբուհական կրթություն	1,599,148,335	
Եվրոպական ծրագրեր	52,730,493	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,651,878,828	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 10 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2023թ. դեկտեմբերի 31

«Հայաստանում Ֆրանսիական
Համալսարան» հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ
2023թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 5

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 7

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

A Member of Crowe Global | A global network of independent accounting firms
Քրոու Գլոբալի անդամ | Անկախ հաշվապահական ընկերությունների գլոբալ անդամ

Crowe

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու , և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի

Crowe

անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր:

Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

20 մայիսի 2024թ.

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
առաջադրանքի ղեկավար

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հոգաբարձուների խորհրդի կազմը

Ֆրանսիայի Հանրապետության կառավարություն

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Ֆրանսիայի Հանրապետության բարձրագույն կրթության ու գիտության և նորարարության նախարարություն

Ժան-Մուլեն Լիոն 3 համալսարան

Հայկական բարեգործական ընդհանուր միություն-Հայաստան

Փարիզի 9–րդ շրջանի քաղաքապետի տեղակալ

Ակբա բանկ ԲԲԸ գլխավոր գործադիր տնօրեն

TK Partners ընկերության տնօրեն/ կառավարման գործընկեր

Soft Construct ընկերության գործադիր տնօրեն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսման վարձերից եկամուտ	4	1,550,848	1,657,978
Եկամուտ շնորհներից		149,305	40,724
Այլ եկամուտ		12,811	144
		1,712,964	1,698,845
Մատուցված ծառայությունների ինքնարժեք		(40,378)	(23,029)
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին		(1,019,709)	(869,443)
Մաշվածություն և ամորտիզացիա		(111,272)	(135,923)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(41,880)	(114,080)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(33,144)	(59,006)
Այլ ծախսեր		(115,445)	(359,637)
Գործառնական գործունեության արդյունք		351,136	137,727
Ֆինանսական եկամուտ		12,309	1,906
Ֆինանսական ծախսեր		-	(1,667)
Այլ ֆինանսական հոդվածներ	5	(1,238)	23,091
Տարվա արդյունք մինչև հարկերը		362,207	161,057
Շահութահարկի գծով ծախս	6	(61,345)	(29,517)
Տարվա արդյունք		300,862	131,540
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		300,862	131,540

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. մայիսի 20-ին

Սալվա Նակուզի
Ռեկտոր

Աստղիկ Սահակյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթ կամ վնասի հաշվետվությունը պետք է դիտարկվի մեկ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված հաշվետվությունների հետ մեկտեղ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	663,707	743,923
Ոչ նյութական ակտիվներ	8	69,702	24,546
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		3,000	3,000
		736,409	771,468
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		3,213	639
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	158,811	181,249
Դեպոզիտներ		-	17,727
Դրամական միջոցներ և համարժեքներ	10	698,389	155,911
		860,413	355,527
Ընդամենը ակտիվներ		1,596,822	1,126,995
Հիմնադրին վերագրելի զուտ արդյունք		946,219	634,381
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություն		48,353	48,725
Հետաձգված եկամուտ	11	14,766	21,722
		63,119	70,447
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով		-	360
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	83,977	105,872
Հետաձգված եկամուտ	11	461,822	246,959
Պահուստներ		41,528	39,459
Ընթացիկ շահութահարկի գծով կրեդիտորական պարտքեր		157	29,517
		587,484	422,167
Ընդամենը պարտավորություններ		650,603	492,614
		1,596,822	1,126,995

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	300,862	131,540
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	111,272	135,923
Հիմնական միջոցների օտարումից վնաս	-	25,466
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	61,345	29,517
Տոկոսային ծախսեր	-	1,667
Տոկոսային եկամուտ	(12,309)	(1,906)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	1,238	(23,091)
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	462,408	299,116
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	40,668	(96,232)
Պաշարների փոփոխություն	(2,574)	-
Հետաձգված եկամտի փոփոխություն	214,863	76,411
Ակտիվներին վերաբերող շնորհի փոփոխություն	(6,956)	-
Պահուստների փոփոխություն	2,069	39,459
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(21,895)	(89,680)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	688,584	229,074
Վճարված շահութահարկ	(93,479)	(7,025)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	595,105	222,048

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(76,411)	(191,269)
Ժամկետային ավանդների մարում/(ներդրում), զուտ	-	101,743
Ստացված տոկոսներ	12,309	1,906
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(64,102)	(87,620)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	531,003	134,428
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	11,475	(10,078)
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	155,911	31,561
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	698,389	155,911

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 27.06.2024 11:12